2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզուների մ/մ 2-րդ կիսամյակի աշխատանքները սկսվել են հունվարի 9-ին:Հերթական մ/մ նիստի ընթացքում մեթոդական միավորման բոլոր անդամների մասնակցությամբ կազմվել է աշխատանքային պլան:Քննարկվել և վերլուծվել են 1-ին կիսամյակի աշխատանքները: Մ/մ նախագահը ներկայացրել է 2-րդ կիսամյակի կատարվելիք աշխատանքները: Մ/մ անդամները ներկայացրել են թեմատիկ պլանները և 2-րդ կիսամյակում նախատեսված իրենց աշխատանքները:

Հունվար ամսին Մովսես Խորենացու անվան հ. 143 հիմնակն դպրոցում կազմակերպվել է անգլերեն լեզվի մարզային օլիմպիադան,որին մասնակցել են Հակոբյան Նարեն-9-րդ ᵃ և Դիլոյան Մանեն 8-րդᵇ դասարաններից:

Փետրվար ամսին ռուսաց լեզվի ուսուցչուհի Ան. Ասլանովան օռինակելի դաս է կազմակերպել 7-րդ ᵃ դասարանում՝ թեման «Хлеб», իսկ մարտ ամսին անգլերենի ուսուցչուհի Լ. Պետրոսյանը օրինակել դաս է անցկացրել 5-րդ ᵇ դասարանում, թեման՝ «March»: Երկու դասերն էլ հագեցած էին և բովանդակալից: Աշակերտները ցուցաբերեցին բարձր գիտելիքներ և կարողություններ:Մայիս ամիսն ռուսաց լեզվի ուսուցիչները /Ասլանովա,Մարտիրոսյան,Թումասյան/ կազմակերպեցին այբբենարանի

հանդեսներ 2-րդ՝ և 2-րդ՝ դասարաններում հրաշալի տոն պարգևելով և՛ երեխաներին, և՛ ծնողներին, ինչպես նաև ողջ դպրոցին:

Ողջ կիսամյակի ընթացքում նախապատրաստական աշխատանքներ կատարվեցին 9-րդ՝ դասարանում քննական առարկաներից: Օտար լեզուների քննությունը ընտրովի է և աշակերտներն իրենք են ընտրում ,որ առարկան են հանձնելու:Աշակերտներից 14-ը ընտրել են անգլերեն, իսկ 16-ը ռուսերեն:

Մ/մ միավորման բոլոր ուսուցիչները տարվա ընթացքում մասնակցել են զանազան սեմինարների և վերապատրաստումների,իսկ ռուսաց լեզվի ուսուցչուհի Կ.Մարտիրոսյանը կմասնակցի ուսուցիչների հերթական պարտադիր ատեստավորմանը:

2-րդ կիսամյակում անցկացվել են մ/մ վեց նիստեր և կազմվել են համապատասխան արձանագրություններ: Ժամանակին տրվել են թեմատիկ գրավոր աշխատանքներ,ուսուցիչները աշխատում են թեմատիկ պլաններով , էլեկտրոնային մատյաններում լրացումները կատարվում են ժամանակին, թերացումներ չկան:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ Մ/Մ ՆԱԽԱԳԱՀ Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ